Վահան Թոթովենց

Ես ծաղիկ չունիմ…

Իմ ծաղիկներս ես բաշխեցի ուրիշներուն և իմ գարնան կողովը պարապ է:
Արծաթ չստացա ես իմ ծաղիկներուս փոխարեն, այնպե՛ս տվի ես բոլորին, իմ գարնան կարմիր վարդերը . . .

Ես հազիվ կը դողդոջեմ անոնց թարմության հիշատակով: Ձեռքս կը նետեմ կողովիս, անիկա լեցուն էր գարնան ծաղիկներով, որո՞ւ տվի ես զանոնք, ո՞վ տարավ և ի՞նչ նվիրեց փոխարեն:

Իմ գարնան կողովը պարապ է, ի՞նչ ես դեմս կանգնած լալագին և ո՞վ ես դու…
Ծաղիկ չտվի քեզ, ես բոլորին բաշխեցի իմ գարնան ծաղիկները:
Իմ գարնան կողովին մեջ միայն անցած աղվորություններու դողդոջուն բերկրանքը կա…

Ես ծաղիկ չունիմ…

1917 թ.